ՀՏԴ 159.9 *Հոգեբանություն*

Լուսինե Ղարախանյան, հ.գ.թ., դոցենտ
Մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅԹԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հակամարտության տրանսֆորմացիան, հակամարտության հոգեբանական կողմի վերհանումն այսօր խիստ անհրաժեշտ է: Ադրբեջանական հանրույթում դժվար է պատկերացնել հակամարտության տրանսֆորմացիայի հնարավոր հեռանկար, քանի որ ադրբեջանցիների ինքնությունը չձևավորված վիճակում է: Քաղաքականության մեջ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը փոխելու իրական շարժառիթների բացակայությունը թերևս ադրբեջանական կողմի մոտ ուղիղ առնչություն ունի ինքնության հետ, որը ուշագրավ ուսումնասիրման նյութ է:
Հոդվածում փորձ է արվել ներկայացնել ղարաբաղյան հակամարտության տրանսֆորմացիայի անհնարինության և ադրբեջանակակն ինքնության միջև ակա կապը:

Բանալի բառեր- Ինքնություն, ինքնության փնտրտուք, ինքնության լեգիտիմացում, կոնֆլիկտի տրանսֆորմացիա, անվտանգության կաղապար, ինքնանույնացում, էթնոգենեզ, լեզու:

Лусине Караханян, к.п.н, доцент
Кафедра педагогики и психологии

ТРАНСФОРМАЦИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА И ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АЗЕРБАЙДЖАНСКОГО СООБЩЕСТВА

Трансформация конфликта и анализ психологического аспекта конфликта чрезвычайно необходима. Трудно представить себе возможную перспективу трансформации конфликта в азербайджанском обществе, поскольку идентичность азербайджанца находится в неурегулированном состоянии. Отсутствие реальных мотивов для изменения ситуации «без войны, без мира» в политике, вероятно, напрямую связано с азербайджанской идентичности, что является интересной проблемой исследования.
В этой статье мы попытаемся представить связь между невозможностью трансформации карабахского конфликта и идентичности Азербайджана.

Ключевые слова- Идентичность, поиск идентичности, легитимация идентичности, трансформация конфликта, шаблон безопасности, самоидентификация, этногенез, язык

Lousine Gharakhanyan, Ph.D. in Psychology, Associate Professor
Chair of Pedagogy and Psychology

KARABAKH CONFLICT TRANSFORMATION AND ISSUES OF IDENTITY OF THE AZERBAIJANI SOCIETY

The transformation of the conflict and the analysis of psychological aspect of the conflict are absolutely necessary. It is difficult to imagine a possible prospect of transformation of the conflict in the Azerbaijani society, as the identity of the Azeri is in the unsettled condition. The absence of real motives for changing the "no war, no peace" situation in politics is probably directly related to the Azerbaijani side of the identity, which is a remarkable study issue.
In this article we try to present the link between the impossibility of the transformation of the Karabakh conflict and the identity of Azerbaijan.

Keywords: Identity, identity search, legitimation of identity, conflict transformation, security template, self-identification, ethno genesis, language.

Հակամարտության տրանսֆորմացիան, հակամարտության հոգեբանական կողմի վերհանումն այսօր ցպահանջ է: Ադրբեջանական հանրույթում դժվար է պատկերացնել հակամարտության տրանսֆորմացիայի հնարավոր հեռանկար, քանի որ ադրբեջանցիների ինքնությունը տարտամ ու նոմադիկ երանգներ ունի: Քաղաքականության մեջ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը փոխելու իրական շարժառիթների բացակայությունը թերևս ադրբեջանական կողմի մոտ ուղիղ առնչություն ունի ինքնության հետ, որը դեռևս ձևավորված չէ: Երևանը ադրբեջանական համարելու Բաքվի հայտարարությունները ոչ այլ ինչ է, եթե ոչ ադրբեջանական հանրույթի ինքնության փնտրտուք: Քաղաքական վերնախավի վարքագիծը, մասնավորապես ռազմատենչ հռետորաբանությունը փաստում են, որ հասարակությունում առկա շատ խնդիրների լուծման բանալին պետք է գտնել չձևավորված ինքնության արմատներում: Ինքնությունն ու ինքնանույնացումը սերտորեն կապակցված են: Իսկ ինչպե՞ս է տեղի ունեում ադրբեջանցիների ինքնանույնացումը: Ո՞ւմ է իրականում հավատում ադրբեջանցին, եթե իրեն համարում է ադրբեջանցի: «Մի կողմից՝ ինքնությունը կարելի է դասակարգել որպես անձնական ինքնության գիտակցման զգացողություն, մյուս կողմից՝ անձնական բնավորության ամբողջականացման անգիտակցական ձգտում, երրորդ՝ ինքնությունն էգոյի սինթեզման չափորոշիչ է, և վերջապես՝ խմբային իդեալների, խմբային ինքնության հետ անձի ներքին համերաշխությունն ապահովող գործոն»[1]:

Գ. Ասատրյանը մեջբերում է խորհրդային ազգաբան Լ.Վ. Օշանինի հետազոտության արդյունքները, համաձայն որի թյուրքական ժողովուրդներին բնորոշ մոնղոլոիդ ռասայի հիմնական հատկանիշներից մեկի՝ էպիկանտուսի տոկոսային առկայությամբ, հետևյալ պատկերն է ձևավորվում. (տղամարդկանց մոտ) ղրղզներ՝ 51%, ղազախներ՝ 22%, ուզբեկներ՝ 11%, թուրքմեններ՝ 6%, իսկ ադրբեջանցիներ՝ 2%-ից էլ ցածր (կանանց մոտ) ղրղզներ՝ 83%, ղազախներ՝ 53%, ուզբեկներ՝ 18%, թուրքմեններ՝ 10%, իսկ ադրբեջանցիներ՝ զրո տոկոս»: Ըստ սրա՝ հեղինակը եզրակացնում է, որ «ադրբեջանցիների մեջ թյուրքական շերտի հիմնական ժառանգությունը մնում է, փաստորեն, միայն լեզուն»[2], որով անհնար է ձևավորել ազգային ինքնություն ասվածը: Նկատի ունենանք, որ ադրբեջաներենը բավականին մեծ փոփոխություններ է կրել: Իսկ լեզվի փոփոխականությունը չի կարող տիրապետություն դառնալ, տիրապետություն ինքնության իմաստով: Ի վերջո ինքնությունը հասարակական միավորման հիմնական միջոց է: Ո՞վ եմ ես. և սա հասարակ հարցադրում չէ ադրբեջանական հանրույթի ներկայացուցչի կամ հենց երկրի ղեկավարի՝ Իլհամ Ալիևի համար:

Սիմվոլիկ ինտերակցիոնիզմն ինքնությունը դիտարկում է որպես այլոց գնահատականի ազդեցությամբ ձևավորվող երևույթ, իսկ ինքնության գործունեությունն ուղղված է ուրիշների սպասումների արդարացման միջոցով սեփական ինքնագնահատականի բարձրացմանը: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել Ալիևի Սյունիքը գրավելու մասին հայտարարությունները, կամ Երևանը ադրբեջանական համարելու կամ Ադրբեջանին վերադարձնելու քաղաքական զառանցանքները:

Սրանք մտասևեռումներ են: Իսկ մտածողության ինքնաբավության թելադրանքներից ածանցվում է ոչ միայն դատարկություն, այլև հիմարություն: Եվ այսպիսի մտասևեռումներ ունեցող ղեկավարից իրականում դժվար է ակնկալել ռացիոնալ ազգային վարքագիծ կամ հակամարտության տրանսֆորմացիայի նախաձեռնություն:

Ըստ ֆենոմենոլոգիական սոցիոլոգիայի ներկայացուցիչներ Փ. Բերգերի և Թ. Լուկմանի՝ «ինքնությունը սուբյեկտիվ իրականության առանցքային տարր է, և ինչպես ցանկացած սուբյեկտիվ իրականություն՝ այն դիալեկտիկ կապի մեջ է հասարակության հետ»[3]: Իսկ որքանո՞վ է այսօր ադրբեջանի հասարակության խմբային ինքնագիտակցությունը կամ ինքնությունը սնվում սուբյեկտիվ իրականությունից, մի երկրում, որտեղ տոտալ վերահսկողության տակ են ազատ խոսքի կամ քաղաքացիական հասարակության ձևավորմանն առնչվող ցանկացած մեծ, թե փոքր նախաձեռնություններ: Տոտալ ռեժիմը և առհասարակ կառավարման տոտալ ոճը չձևավորված ինքնության կամ երերուն ինքնությունը պաշտպանելու միջոց է: Ինչպես իրավացիորեն նշում է Ա.

[1] Фрейджер Р., Фэйдимен Дж., Теории личности и лич- ностный рост, М., Изд. «Мир», 2004, с. 195.

[2] Асатрян Гарник. Азербайджанская национальная идея: отведено ли в ней место для нацменьшинств? https://regnum.ru/news/1470705.html 10.02.2018 թ.

[3] Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., “Медиум”, 1995, с. 279.

Նալչաջյանը, «Միջէթնիկական կոնֆլիկտների հետևանքներից մեկն այն է, որ դրանց շնորհիվ... մարդիկ սկսում են ավելի լավ գիտակցել, թե ինչ էթնոսի են պատկանում, ինչով են տարբերվում մյուս էթնոսների անդամներից, ովքեր են իրենց բարեկամներն ու թշնամիները: ... Եթե մենք որևէ էթնոսի ծագումն ու զարգացումը դրական երևույթ ենք համարում՝, ապա այդպիսին պետք է համարենք նաև նրա ինքնագիտակցության զարգացումը, որը էթնոգենեզի կարևորագույն հոգեբանական արդյունքներից մեկն է: Քաղաքական գործիչներից շատերը լավ են հասկանում ազգի համախմբման համար ընդհանուր թշնամու գոյության նշանակությունը և նույնիսկ հնարում են այդպիսի թշնամի, երբ այն իրականում չկա: Թշնամական վերաբերմունքը հանգեցնում է էթնոսի ինքնագիտակցության ուժեղացմանը, խորացնում է ազգակիցների բախտի համար պատասխանատվության զգացումը, սեփական անցյալն ու ցեղային արմատներն իմանալու ցանկությունը[1]: Ադրբեջանում պարբերաբար կազմակերպվող զորավարժությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ սեփական տարտամ ինքնությունը որոշակիացնելու միտումներ: Զորավարժությունները, նաև ռազմատենչ, արմատական բնույթ ունեցող հայտարարությունները ադրբեջանական հանրույթի անհանգստության դեմ ուղղված յուրօրինակ էմոցիոնալ «պատվաստում» է, որով երկրի իշխանությունները փորձում են վստահության միջավայր ստեղծել բնակչության շրջանում: Ստացվում է այնպես, որ առանց թշնամու կերպարի մշտական, կայուն գեներացման Ադրբեջանում անհնար է ստատիկ վիճակում պահել էթնիկական ինքնագիտակցությունը: Այսպես արդեն անհնար է դիտարկել տրանսֆորմացիայի որևէ տարբերակ, քանի որ տրանսֆորմացիան սկսվում է մարդկանց մտքերում, համոզմունքներում ու վարքում: Շատ կարևոր է, այն հանգամանքը, թե ովքեր են տրանսֆորմացիայի նախաձեռնողները: Ալիևի վարչակարգը, ըստ էության չի կարող դառնալ հակամարտության տրանսֆորմացիայի նախաձեռնող կողմ: Պատմության կեղծարարությունները, դպրոցական ծրագրային նյութերի ազգայնամոլական երանգները, մանկական գրականության մեջ թշամու կերպարի էսկալացիան խոսում են ինքնության ապարդյուն փնտրտուքների մասին: Ժողովրդավարական արժեքներ չճանաչող, քաղաքացիական հասարակություն չունեցող այդ երկրում հակամարտության տրանսֆորմացիան չունի հեռանկար: Ռազմատենչ հռետորաբանությունը շարունակում է ագրեսիվ կարծրատիպերի էսկալացիան, ինչի արդյունքում անհնար է լինում խոսել հակամարտության տրանսֆորմացիայի ու խաղաղ կարգավորման մասին:

Իրականում ոչ պաշտոնական դիվանագիտության նախաձեռնությունները, մասնավորապես, քաղաքացիական հասարակության ներգրավումը շարունակում է անհնար դիտվել, քանի որ երկու կողմերի մոտ էլ խիստ մեծ պատասխանատվություն պահանջվող է համարվում խաղաղ կարգավորմանն ուղղված ժողովրդական դիվանագիտության ցանկացած դրսևորում:

Եթե լավատես լինենք, ապա կարող ենք ասել, որ ժողովրդական դիվանագիտությունը հնարավոր է օգտագործել հակամարտության տրանսֆորմացիայի հասնելու համար: Դա կարող է նպաստավոր լինել մարդկանց դրական կողմնորոշումների և վարքային դրսևորումների համար՝ թե՛ անձնական, թե՛ խմբային մակարդակում: Ադրբեջանում կան և ի դեմս մտավորականության որոշ շերտի ու դեմոկրատական հայացքներ ունեցող հասարակական կազմակերպիչների կարելի է հնարավոր դիտել տրանսֆորմացիայի երևույթը: Այսպիսի լարվածությամբ շատ դժվար է ու գրեթե անհնար ինքնություն ձևավորելու, առավել ևս պահելու ադրբեջանական վերնախավի ձեռնարկումները, քանի որ բնակչության ինքնությունը իրավացիորեն խարսխված է սոսկ տվյալ հանրույթի ներկայացուցիչների քաղաքացիական պատկանելության վրա:

Է. Գիդենսն ինքնության կայացման համար կարևոր բաղադրիչ է համարում վստահությունը, որի ծնունդը կապված է մանկության հետ: <<Համընդհանրացումն անհանգստություն ու վտանգի զգացողություն է առաջացնում: Ալիևի հռետորաբանության թվացյալ վստահությունը սեփական անհանգստության դեմ ուղղված էմոցիոնալ «պատվաստում», որն անհատին կպաշտպանի ապագայի վտանգներից և ցանկացած իրավիճակում խիզախության զգացողություն կտա: Դրանից անպարտելիության զգացում է առաջանում, այն թույլ է տալիս տիրապետել իրավիճակներին, որոնք կարող են հոգեբանական կամ ֆիզիկական ամբողջությանը վնաս հասցնել>>[2]: Թերևս

[1] Տե՛ս Նալչաշյան Ա. Ա., էթնիկական Հոգեբանություն, Ե., 2001, էՀ 71-72: История национальных политических партий России (Материалы международной конференции, М., 1997, с 215)

[2] Giddens A., Modernity and Self identity: Self and society in late modern age. Cambridge: Polity Press, 1991, p. 37.

այսպես է ձևավորվում ադրբեջանական հանրույթի «անվտանգության կաղապարը», որը դառնում է նաև սեփական ինքնության ձեռքբերման տխուր և անհուսալի քայլ կամ նախաձեռնություն:
1993 թվականին, երբ իշխանության եկավ Հ.Ալիևը, նա առաջ քաշեց «մեկ ազգ – երկու պետություն» կարգախոսը, որը Ադրբեջանի ու Թուրքիայի միջև ձևավորված քաղաքական դաշինքի սիմվոլացված և խոսքային դրսևորում ստացած արտահայտություն էր, որից սկսեց սնվել նորաթուխ ադրբեջանի չձևավորված ինքնությունը: Սա, ըստ էության բերում է կրկնակի էթնիկական ինքնանույնացման, որը ևս լիարժեք ինքնություն ձևավորելու պայման չէ: Այսինքն էթնիկական բացառիկության հասնելու ավագ Ալիևի այս փորձը ևս կարելի է ձախողված համարել, քանի որ կերակրում է միայն դեկլարատիվ ինքնությունը, այսինքն իրադրական՝ տվյալ պահի թելադրանքով: Այսօր ևս Ադրբեջանը կանգնած է էթնիկացման լուրջ խնդրի առաջ: Կարելի է ենթադրել, որ սրա հետ են կապված բոլոր այն կեղծարարությունները, որոնք հնչում են նախագահների մակարդակով: Ալիևի՝ Երևանը ադրբեջանական պատմական տարածք համարելու միֆը ոչ այլ ինչ են, եթե ոչ ինքնության փնտրտուք ու մարմաջ: Խորհրդային ադրբեջանականացումը ըստ էության դարձավ ձախողված էթնոպրոյեկտ: Ադրբեջանի ու Թուրքիայի միջև ձևավորված այսօրվա քաղաքական դաշինքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ինքնության փնտրտուք: ԽՍՀՄ Ադրբեջանի կորստով տեղի ունեցավ նաև տարտամ ինքնության կորուստ, ինչը սկսեց արհեստականորեն լցվել ու կերակրվել հակամարտությամբ պայմանավորված թշնամու կերպարի ստեղծման անհրաժեշտությամբ: Ադրբեջանի թյուրքացման տենդենցը կարելի է դիտել Ալիևի ինքնավստահության միջուկը: Ավելին, Թուրքիայի նախագահ Էրդողանի հետ ունեցած հոգեբանական խորը նույնացումը բերում է նույն ոճի ավտորիտար քաղաքականության:
Է.Սմիթը գրում է. «Առանձին էթնիկ ինքնության ընկալումը սկսվում է այն ժամանակ, երբ բնակչությանը տրվում է կոլեկտիվ սեփական անուն (ինքնանուն), որն ընդգծում է նրա առանձին հատվածների միասնականությունը, և այն ժամանակ միայն, երբ այդ անունն ընդունվում է հանրույթի բոլոր անդամների կողմից, ովքեր գիտակցում են իրենց առանձնահատկությունը»[1]:
Ջուղայի խաչքարերի ոչնչացումը, միջնադարյան հայկական խաչքարերի՝ Ադրբեջանի կառավարության կողմից կազմակերպված ավերումը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում, հատկապես Ջուղա քաղաքում ոչ այլ ինչ է, եթե ոչ էթնոգենեզի լիակատար գործընթաց չապրած և բարբարոսության փուլում մնացած հանրույթի հոգեբանական ինքնապաշտպանություն, զբաղեցրած տարածքի հետ ինքնության արհեստական լեգիտիմացում: Ընդ որում այստեղ մենք գործ ենք ունենում ազգերի պատմության մեջ բացառիկ այնպիսի մի երևույթի, երբ այս կամ այն պարամետրերով ազգ կոչվող հանրույթը սկսում է էթնոսի ձևավորման տարրական վարքային ստրատեգիաներ ունենալ: Վերջին բնաջնջման դեպքը եղել է 2005-2006 թվականներին, երբ ոչնչացվել է Ջուղա քաղաքի հայկական գերեզմանոցը իր հազարավոր խաչքարերի հետ: Այնտեղ գտնվող խաչքարները ջարդված են եղել ծանր շինարարական տեխնիկայի օգնությամբ, իսկ գերեզմանոցի ազատված տարածքը վերածվել է հրաձգադաշտի: Ինչու հենց հրաձգադաշտի: Այս իրողությունը ևս վկայում է այն մասին, որ ապակառուցողական ագրեսիան, որը, ավելի շատ բնորոշ է վայրենության փուլը չհաղթահարած հանրույթին, անգիտակցականի մակարդակում շարունակում է գործել, և մոտ ապագայում որևէ այլ բան կանխատեսել չի կարելի:
Ինքնությունն ունի ներկայացուցչական նկարագիր: Ավելին, երբեմն ինքնության ճշգրիտ բնութագրման համարժեք է դառնում «վկայող» արտահայտությունը: «Ինքնությունը վկայում է, որ անհատը ներկա է եղել. ներկա է և երաշխավորում է ներկա լինել»: Ի դեպ, ինքնությունը համարվում է նաև ապագայի երաշխավոր: Ինքնության որոշակիության բացակայության կամ փնտրտուքի պայմաններում անհնար է ունենալ ինքնության անհատական նախագիծ, որը հիմնված լինի արժեհամակարգի ու բարոյականության վրա: Ինչպե՞ս է Ալիևը երաշխավորում ադրբեջանցիների ապագան: Եվ այդ երաշխավորումների մեջ ինչ տոկոս է կազմում արժեհամակարգն ու արդարությունը: Ահա հենց այս հարցի անորոշ պատասխանից էլ ածանցվում է հակամարտության տրանսֆորմացիայի անհնարինությունը: Ադրբեջանի չձևավորված էթնոպրոյեկտը լուրջ խոչընդոտ է հակամարտության տրանսֆորմացիայի համար:

[1] Smith Anthony, Ethno-Symbolism and Nationalism: a Cultural Approach, London and New York, 2009. էջ 46:

Օգտագործված գրականություն

1. Այվազյան Ա., Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու, պետություն, Եր., 2007։
2. Նալչաջյան Ա. Ա., էթնիկական Հոգեբանություն, Ե., 2001, ԷՀ 71-72: История национальных политических партий России (Материалы международной конференции, М., 1997, с 215)
3. Նալչաջյան Ա. «Ազգային ինքնություն: Էթնոհոգեբանության և էթնոքաղաքագիտության դիրքերից», Երևան.: Հեղինակային հրատարակություն, 2012 թ.:
4. Նալչաջյան Կ., «Էթնիկական ինքնագիտակցություն», Երևան, «Զանգակ- 97», 2003 թ.
5. Асатрян Гарник. Азербайджанская национальная идея: отведено ли в ней место для нацменьшинств? https://regnum.ru/news/1470705.html 10.02.2018 թ.
6. Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., “Медиум”, 1995, с. 279.
7. История и идентичность: Южный Кавказ и другие регионы, находящиеся в переходном периоде. Статьи ученых-историков и экспертов из Азербайджана, Армении и Грузии (Ереван, Армения)/под ред. Р. Раджабова, С. Григоряна, В. Колбан.- Ер.: Едит Принт, 2010. – 440 стр.
8. Налчаджян А. А., “Этногенез и ассимиляция (психологические аспекты)”, Ереван-Москва, “Огебан”, 2003 г.
9. Фрейджер Р., Фэйдимен Дж., Теории личности и лич- ностный рост, М., Изд. «Мир», 2004, с. 195.
10. Giddens A., Modernity and Self identity: Self and society in late modern age. Cambridge: Polity Press, 1991, p. 37.
11. Smith Anthony, Ethno-Symbolism and Nationalism: a Cultural Approach, London and New York, 2009.